

## ՌԱԿ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ՝ ԲԱԿՕ ՍԱՀԱԿԵԱՆԻՆ ՀԵՏ

Մարտ 12-էն ի վեր մայրաքաղաք Ուաշինկթընի մէջ կը գտնուի Արցախի կառավարութեան պատուիրակութիւնը քաղաքական շփումներ հաստատելու գլխաւորութեամբ նախագահ Բակօ Սահակեանի:



Բակօ Սահակեան առ ի գնահատանք՝ ՌԱԿ Գերագոյն Խորհուրդը պատուեց Արցախի Ազատագրութեան Շարժումի 30-ամեակին նուիրուած շքանշանով

Բացի քննարկականներու հանդիպումներէն պատուիրակութիւնը խորհրդակցութիւններ եւ պատուասիրութիւններ ունեցաւ հայկական կարգ մը կազմակերպութեանց ղեկավարներուն հետ:

Այս առիթով Ուաշինկթըն ժամանած էին ՌԱԿ Գերագոյն Խորհուրդի անդամներ ընկերներ Վարդան Նազիրեան եւ Երուանդ Ազատեան, որոնց միացած էր ընկ. Գէորգ Մարաշեան:

ՌԱԿ-ի պատուիրակութիւնը Մարտ 15-ին հրաւիրուած էր Հայաստանի դեսպանատան մէջ ի պատիւ Արցախի պատուիրակութեան սարքուած ընդունելութեան:

Մարտ 16-ին յատուկ ժամադրութեամբ ՌԱԿ-ի պատուիրակութիւնը հանդիպում ունեցաւ նախագահ Բակօ Սահակեանի պաշտօնական խումբին հետ Արցախի Ուաշինկթընի ներկայացուցչութեան կեդրոնին մէջ:

ՌԱԿ Գերագոյն Խորհուրդի նախագահ ընկ. Վարդան Նազիրեան բարի գալուստ մաղթեց հիւրերուն եւ ապա զեկուցեց ՌԱԿ-ի անդամներուն գործունէութեանց մասին Արցախի մէջ:

Հանդիպումը վերածուեցաւ խորքային խորհրդակցութեան Արցախի քաղաքական կացութեան մասին, քննարկուեցան կարգ մը ծրագիրներ, որոնք պիտի իրագործուին մօտիկ ապագային Արցախի մէջ ՌԱԿ-ի եւ յարակից կազմակերպութեանց միջոցաւ:

Յետ աւարտման խորհրդակցական հանդիպման, ՌԱԿ Գերագոյն Խորհուրդը ճաշկերոյթով մը պատուեց Արցախի պատուիրակութիւնը, յարակից շքեղ ճաշարանի մը սրահին մէջ:

Արցախի նախագահ Բակօ Սահակեան, գնահատելով ՌԱԿ Գերագոյն Խորհուրդի ծաւալած աշխատանքները, Վարչութիւնը պատուեց Արցախի Ազատագրութեան Շարժումի 30-ամեակին նուիրուած շքանշանով:

## ԲԱԿՕ ՍԱՀԱԿԵԱՆ ՊԱՐԳԵԻԱՏՐԱԾ Է ՀԲԸՄ ՆԱԽԱԳԱՀ ՊԵՐՃ ՍԵՂԻՐԱԿԵԱՆԸ

Աշխատանքային այցով ԱՄՆ մայրաքաղաք Ուաշինկթըն գտնուող Արցախի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեան պարգևատրուած է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան նախագահ Պերճ Սեղիրակեանը անոր շնորհելով «Մովսէս Խորենացի» շքանշան Արցախի Հանրապետութեան մատուցած ծառայութիւններուն համար:



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐԶԱՊԵՏ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Կարէն Կարապետեանի գլխաւորած պատուիրակու-թիւնը 12 Մարտ 2018-ին երկօրեայ պաշտօնական այցելութեամբ մը հասաւ Լիբանան: Այցելութեան շրջագիծին մէջ ան



հանդիպումներ ունեցաւ Լիբանանի բարձրագոյն ղեկավարութեան՝ նախագահ զօր. Սիշել Աունի, վարչապետ Սաատ Հարիրիի եւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի հետ:

Վարչապետ Սաատ Հարիրի վարչապետարանին մուտքին պաշտօնական արարողութեամբ դիմաւորեց հայաստանցի իր պաշտօնակիցը եւ ապա դռնփակ հանդիպում մը ունեցաւ Կարէն Կարապետեանի հետ:

Վարչապետ Կարապետեան յայտնեց, որ Հարիրիի հետ իր քննարկումները ընթացած են դրական եւ փոխադարձ վստահութեան մթնոլորտի մէջ:

Ապա առաջարկեց հիմնել միացեալ ֆոնտ մը՝ որ պիտի զօրակցի Լիբանանի եւ Հայաստանի միջեւ կատարուելիք ներդրումներուն:

Շարունակութիւնը էջ 6

## Դեսպան Չարչօլլեանը իր հաւատարմագիրերը յանձնեց Կիպրոսի նախագահին

Մարտ 6-ին Կիպրոսի մէջ ՀՀ դեսպան Տատեյ Չարչօլլեանը (նստավայրը՝ Աթէնք) իր հաւատարմագիրերը յանձնեց երկրի նախագահ Նիքոս Անասթասիատիսին:



Հաւատարմագիրերու յանձնման հանդիսատար արարողութեան յաջորդած առանձնագրոյցի ընթացքին նախագահ Անասթասիատիսը, շնորհաւորելով ՀՀ դեսպանին պաշտօնը ստանձնելու կապակցութեամբ, յոյս յայտնեց, որ վերջինս իր նշանակալի աւանդը կներդնէ հայ-կիպրական եղբայրական յարաբերութիւններու ալ աւելի խորացման եւ ամրապնդման գործին հաւաստիացնելով, որ Կիպրոսի կառավարութիւնը առաւելագոյն աջակցութիւն կցուցաբերէ նրան իր կարեւոր եւ պատասխանատու առաքելութեան մէջ:

Նախագահ Անասթասիատիսը վերահաստատեց, որ Կիպրոսը Հայաստան-ԵՄ յարաբերութիւններու զարգացման ակտիւ ջատագովն է եւ հետամուտ պիտի ըլլայ այդ համագործակցութեան յետագայ ընդլայնման ու խորացման բոլոր ոլորտներու մէջ:

Շարունակութիւնը էջ 6

**ՀՀ ՍՓԻՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ  
ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
«ՍՓԻՒՌՔ» ԱՄԱՌՆԱՅԻՆ  
ԴՊՐՈՑ 2018»**

Սփիւռքի հայ համայնքներուն մէջ ազգային ինքնութեան պահպանմանն ու զօրացմանը, երիտասարդներու շրջանակին մէջ հայոց լեզուի իմացութեան մակարդակի, հայկական կրթօճախներու ուսուցիչներու, կրթական գործի պատասխանատուներու, ազգային երգ ու պարի խումբերու ղեկավարներու որակաւորման բարձրացմանը, Սփիւռքի ՁԼՄ-ներու, երիտասարդական կազմակերպութիւններու գործու-նէութեանը, ինչպէս նաեւ համայնքներու ինքնակազմակերպմանն աջակցելու նպատակով ՀՀ սփիւռքի նախարարութիւնը Երեւանի պետական համալսարանի հետ համատեղ 2018 թուին կը շարունակէ իրականացնել «Սփիւռք» ամառնային դպրոց» ծրագիրը:

«Սփիւռք» ամառնային դպրոցէն ներս կ'անցկացուին դասընթացքներ հինգ ուղղութիւններով՝

1. Հայոց լեզուի արագացում ուսուցում (Յուլիսի 01-28).
2. Հայոց լեզուի ուսուցիչներու եւ կրթական գործի կազմակերպիչներու վերապատրաստում ( Յուլիսի 01-28),
3. Երիտասարդ լրագրողներու վերապատրաստում (Յուլիսի 01-14),
4. Ազգային երգի խմբավարներու եւ պարուսույցներու վարպետութեան դասընթացքներ (Յուլիսի 01-14),
5. Երիտասարդ առաջնորդներու եւ համայնքային գործի կազմակերպիչներու դասընթացք (Յուլիսի 01-14):

«Սփիւռք» ամառնային դպրոց 2018» ծրագրի բոլոր դասընթացքները կ'անցկացուին հայերէնով: Մասնակցին կը տրուի հաւաստագիր, եթէ ան կատարէ իր կողմէ ընտրուած գործնական աշխատանքը՝ ստանալով յանձնաժողովի դրական գնահատականը, ինչպէս նաեւ դասընթացքի ժամանակ չունենալով երեք օրէ (կամ 9 դասաժամէ) աւելի բացակայութիւն: Բացի ծրագրուած տեսական ու գործնական դասերէն կը կազմակերպուին նաեւ մշակութային ձեռնարկներ, այցելութիւններ Հայաստանի պատմական ու տեսարժան վայրեր, հանդիպումներ պետական, հասարակական, մշակութային գործիչներու, հոգեւոր այրերու հետ:

Օրագրին ի բացառեալ Հայոց լեզուի արագացում ուսուցումէն, կրնան մասնակցիլ միայն 16 տարեկանէն բարձր սփիւռքահայերը, որոնք ՀՀ քաղաքացի չեն հանդիսանում (բացառութեամբ երկքաղաքացիութիւն ունեցող ՀՀ քաղաքացիներու) կամ մշտական բնակութիւն չեն ունեցած ՀՀ-էն ներս վերջին 10 տարուան մէջ: Առաջին անգամ մասնակցող սփիւռքահայերը կ'ապահովուին գիշերակացով (հնարաւոր է 2-6 մարդու համար նախատեսուած հիւրանոցային համարներով):

Այն սփիւռքահայերը, որոնք նախկինին մասնակցած են «Սփիւռք» ամառնային դպրոցի դասընթացքներուն կրնան անվճար մասնակցիլ ընտրուած դասընթացքին յաճախելով բոլոր դասերուն, սակայն անոնց գիշերակացը չ'ապահովուիր: Բնակութեան երկրէն Երեւան եւ հակառակ ուղղութեամբ, ինչպէս նաեւ դասընթացքէն դուրս երթելէկութեան ծախսերը կը հոգան մասնակիցները:

Յայտերը կ'ընդունուին մինչեւ 2018 թուի Յունիսի 2-ը ելեկտրոնային գրանցման տարբերակով: Անհրաժեշտ է մուտք գործել Օրագրի պաշտօնական կայքի՝ [www.dss.am](http://www.dss.am) «Դպրոց» բաժնի հինգ դասընթացքներէն իւրաքանչիւրի ենթաբաժնում գտնուող «Արձանագրուիլ» մասը:

**«Ժխտման ճարտարապետները» ֆիլմի արտադրողը Իսրայէլի մէջ խօսած է Հայոց Յեղասպանութեան ճանաչման մասին**

Հանրայայտ դերասան, հաղորդավար եւ արտադրող Տին Քէյն The Jerusalem Post պարբերականին տուած է հարցազրոյց, որու ընթացքին խօսած է հայոց ցեղասպանութեան ճանաչման կարեւորութեան մասին, կը հաղորդէ «Փանարմինիւն»-ը:



Տին Քէյն, որ Մարտ 5-ին Երեւանի մէջ առաջին անգամ ցուցադրուած «Ժխտման ճարտարապետները» վաւերագրական ֆիլմի գործադիր համարտադրողն է, այս օրերուն կը գտնուի Իսրայէլ: Ան կը մասնակցի USA Today-ի աստղ, «Էմմի»-ի կրկնակի մրցանակակիր Լորա Մքքենզիի ճանապարհորդական հեռուստահաղորդման նկարահանումներուն:

Մարտ 14-ին լոյս տեսած եւ պարբերականի առաջին էջին վրայ գովազդուած յօդուածին մէջ Տին Քէյն նշած է, որ թէեւ չի կրնար օտար երկրին թելադրել, թէ ինչ ընել, ան, բայց եւ այնպէս, լիայոյս է, որ բոլոր պետութիւնները պիտի ճանչնան Յեղասպանութիւնը, քանի որ անիկա «պատմական փաստ է»:

Ան նաեւ ըսած է. «Ես կը հասկնամ Միացեալ Նահանգներու քաղաքական նախապայմանները. մենք Թուրքիոյ հետ դիւանագիտական կապեր ունինք: Պատմութիւն կամ ցեղասպանութիւն ուսումնասիրող իւրաքանչիւր մարդու համար յստակօրէն պարզ է, որ ցեղասպանութիւնը եղած է: Անիկա այսօրուան Թուրքիոյ ժողովուրդը կամ կառավարութիւնը չէ գործած... Բայց ատիկա սարսափելի էր, իր անունով կոչեցէք եղելութիւնը», - ըսած է Քէյն:

**Մովսէս Խորենացին կը յայտնուի Երոպական յայտնի առ ցանց հանրագիտարանին մէջ**

Մովսէս Խորենացիի աշխատանքը այսօր ալ մեծ դեր կը խաղայ հայերու ինքնագիտակցութեան մէջ: Հայ մեծանուն պատմիչ Մովսէս Խորենացիի մասին յօդուած հրատարակած է Ancient.eu առանց հանրագիտարանը, կը հաղորդէ [armeniasputnik](http://armeniasputnik)-ը:



Յօդուածին հեղինակ Մարք Քարթրայթը կը նշէ, որ 5-րդ դարու պատմիչ Մովսէս Խորենացի «պատմահայր» կ'անուանեն իր «Հայոց պատմութիւն» մեծածաւալ աշխատութեան համար:

Յօդուածին մէջ հեղինակը կը պատմէ անոր կեանքի մասին եւ կը գրէ, որ Խորենացիին ուսուցիչը հայոց գիրերու ստեղծող Մեսրոպ Մաշտոցը եղած է:

«Հայ պատմաբանը կ'ըսէ, որ զինք ուսանելու նպատակով ուղարկած են Եդեսիա, Ալեքսանդրիա, Կ. Պոլիս եւ Աթէնք», - կ'ընդգծէ Քարթրայթը: Անոր խօսքով՝ հայերու պատմութիւնը, որ առաջին անգամ տպուած է 1695-ին, ազդած է աւելի ուշ շրջանի պատմաբաններու վրայ, իսկ Հայաստանի պատմութեան բազմակողմանի լուսաբանումը նպաստած է հայերու ազգային ինքնութեան զգացումի զարգացման:

«Հակառակ անոր, որ Մովսէս Խորենացիի աշխատութեան մէջ որոշ տուեալներ կրնան վիճելի ըլլալ, անոր գիրքը Հայաստանի պատմութեան անքակտելի մասն է: Հայ նահապետ Հայկի մասին առասպելը այսօր ալ կը դասաւանդեն աշխարհի ամբողջ հայկական դպրոցներուն մէջ:

Անշուշտ, Խորենացիի աշխատութիւնը առաջուան պէս կը շարունակէ կարեւոր դեր խաղալ հայերու ազգային ինքնութեան մէջ նաեւ 21-րդ դարուն», - կը նշէ յօդուածին հեղինակը:

«Հայոց պատմութիւն»-ը կ'ընդգրկէ հայ ժողովուրդի ձեւաւորումէն մինչեւ 5-րդ դարու պատմութիւնը եւ կը հանդիսանայ հին հայկական առասպելներու, հեթանոսական սովորոյթներու եւ այլ ժողովուրդներու հետ հայերու կապերու մասին նիւթերու ամենահարուստ աղբիւրը: Մովսէս Խորենացիի մասին կ'ըսեն «հայոց պատմահայր» կամ «քերթողահայր»: Հայերը անոր այդ տիտղոսները տուած են, քանի որ ան մեզի հասցուցած է հայոց ամբողջական պատմութիւնը՝ հայոց մեծերու ծննդաբանութենէն մինչեւ իր ապրած ժամանակները:

# ՅՈՒՆԱՅԱՅ ԳԱՂՈՒԹԸ ՕՐՅՆԵԱԼ ՊԱՏԱՊԱՐԱՆ ԶՄԻՒՆԻՈՅ ՀԱՅ ԱՂԵՏԵԱԼՆԵՐՈՒՆ

ՊԿՏ. ԶԱԽԵ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

«Ճշմարտությունն այն է որ միայն Հայ Եկեղեցին պիտի շահեր եթե թեմական կարգադրությունները կատարուէին Մայր Աթոռի գիտությունը եւ առանց կանոնազանց անջատումի, եւ սակայն այդ կը պահանջէր Կիլիկիոյ հոգեւոր իշխանութենէն պատուաբեր կամք եւ արի կեցուածք»

Յունաստան Եղեռնէն ետք Չմիւռնիոյ 1922 թուի հայկական կոտորածներէն մազապուրծ ազատած հայ խլեակներ, ներառեալ մեծ թիւով որբեր, Յունաստան ապաստան գտան ուր կազմեցին հրաշքի համազօր հայկական գաղութ, թեմ, դպրոցներ եւ միութիւններ: Աթէնքի հայ գաղութը նախապէս 1905 թուին մայրաքաղաքի Քրիէզի փողոցին վրայ հողաշերտ մը գնած էր եւ հոն մատուռ մը կառուցած, որուն հանգանակութեան նպաստած էր նաեւ Յունաստանի թագուհին: Աւելի ետք, Տիգրան Խան Քէլէկեանի բարերարութեամբ կառուցուած էր Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցին Աթէնքի մէջ, որուն յաջորդած է թեմական առաջնորդութիւնը Հայրապետական յատուկ Կոնդակով Տ.Տ. Գէորգ Ե. Սուրբնեան Ամենայն Հայոց Կաթողիկոսէն:

1915-ի եղեռնէն ետք Յունաստանի հայ գաղութը ստուարացաւ, մանաւանդ Չմիւռնիոյ մեծ աղետէն ետք, մօտ 120,000 հայորդիք, ներառեալ 20,000-ի հասնող հայ որբեր: Նորահաս այդ թափառական գաղթականները նախ ապաստանեցան վրաններու եւ թիթեղածածկ տնակներու մէջ, որոնց կողքին երբեմն փոքրիկ կրպակներ շինելով իրենց ապրուստը կը ճարէին: Հայեր Աթէնքի մէջ կեդրոնացած էին, եւ մաս մըն ալ Թրակիա՝ յատկապէս Սելանիկ, Բիրէա, Կրետէ, Սամոս, Միդիլիմի, Քիոս եւ Քորֆու կղզիներուն մէջ, բոլորն ալ Եգէական ծովուն վրայ:

**Կարապետ Եպիսկոպոս Մազլըմեան (Աթէնք)**  
**Երուանդ Եպիսկոպոս Փերտահճեան (Թրակիա)**  
**Թեմակալ առաջնորդներ**  
Եկեղեցական եւ ազգային վարչութիւնը երկու միացեալ կեդրոններ ունէր Թեմին ենթակայ՝ Աթէնքի եւ Սելանիկի (Թեսալոնիկէ) վարչութիւնները:

Առաջինը կը ղեկավարէր Յունական թերակղզիի եւ կղզիներու հայութեան գործերը, եւ երկրորդը՝ Թրակիոյ եւ Մակեդոնիոյ հայ համայնքներուն եկեղեցական գործերը, երկուքն ալ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իրաւասութեան ներքեւ: Թեմակալ երկու Առաջնորդներ կը գործակցէին, մին Աթէնքի Կարապետ Մազլըմեան, եւ միւսը Թրակիոյ Երուանդ Փերտահճեան Եպիսկոպոսները, որոնք որբախնամ հոգածութիւնը նախապայման համարեցին, քանի որ հայ որբեր յոյն որբանոցներու մէջ զետեղուելով ստոյգ վտանգի առջեւ կը գտնուէին, կորսնցնելով իրենց հարազատ կապը հայրենի լեզուին հետ: Առաջնորդ Սրբազանները ահազանգ հնչեցուցին որ հայկական դպրոցներ իսկոյն բացուէին, ու յաջողեցան այդ վսեմ եւ գրեթէ անկարելի առաքելութեան մէջ: Կարճ ժամանակ ետք Փերտահճեան Պուլկարիա փոխադրուեցաւ եւ Տ.Տ. Խորէն Ա. Սուրբաբեկեան Կաթողիկոսի կողմէ Առաջնորդ կարգուեցաւ Պուլկարիոյ թեմին:

Մազլըմեան Սրբազան նախ Որբախնամ Միութիւնը հաստատեց Աթէնքի մէջ, դիմելով արտասահմանի օգնութեան: Աթէնք հասան Վահան Թէքեան, Թէոդիկ, եւ Արշակ Ալպոյաճեան: Թէքեան եղաւ այն ազդեցիկ անձը որ Յունաստանէն Եգիպտոս վերադառնալով, տեղւոյն Առաջնորդ Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեանի քաջալերանքով բազմիցս խօսեցաւ թէ «մեր ազգին պատկերը չափազանց տխուր է այսօր, բայց պատկերին մութ կողմը Յունաստան ներկայիս գտնուող հայ գաղթականներն ու որբերն են»: Մասնաւորելով իր խօսքը հայ որբերուն, Թէքեան կը հաղորդէր թէ յաւելեալ 7500 որբեր Յունաստան եկած էին Կ. Պոլսէն եւ Խարբերդէն, եւ սակայն հապճեպ կարգադրութեամբ որոշուած էր ցրուել տղաքը, եւ 14 տարեկանէն վեր աղջիկները որբ չհամարելով զանոնք որոշ աշխատանքի կամ ծառայութեան դրկելով:

**30 Հայ դպրոցներ**  
Բարեբախտաբար որբերու փոխադրութեան հարցը իր ընթացքը փոխեց, եւ իսկոյն 1920-ական թուականներուն Յունաստանի մէջ հիմնուեցան 30 հայդպրոցներ՝ հին վարժարաններու կողքին, եւ որբեր ազատ մնացին օտարամուտ ազդեցութիւններէ: Կազմակերպուեցան բարեգործական, հայրենակցական, երիտասարդական եւ մարզական միութիւններ: 1924-էն ետք շուրջ 35 պարբերականներ սկսան հրատարակուիլ յունահայ համայնքէն ներս:

1918-ի զինադադարէն ետք, թեմի առաջնորդութիւնը ստանձնեց Պանտղրմա-Պալքեսերի նախկին Առաջնորդ Տ. Կարապետ Եպիսկոպոս Մազլըմեան, որ 1915 թուին իր թեմի ժողովուրդին հետ

գաղթական ելած էր տարագրութեան հոսանքին հետ: Իր տառապագին թափառումներէն ետք Մազլըմեան Եպիսկոպոս կարողացաւ Երուսաղէմի հայոց վանքը ապաստանիլ՝ թուրք կառավարութեան արտօնութեամբ, մաս կազմելով Տ.Տ. Սահակ Կաթողիկոս Պատրիարքի սինոդական եպիսկոպոսներուն: Ձինադադարին երբ բոլորը միասին աքսորուեցան Երուսաղէմէն, Կարապետ Եպիսկոպոս Մազլըմեան ապաստանեցաւ Յունաստան ուր նաեւ ընտրուեցաւ Առաջնորդ:

**Յունահայ Թեմի Կազմութիւնը**  
Մազլըմեան Եպիսկոպոսի օրով թեմը ունէր վեց հայկական համայնքներ՝ Աթէնք, Գանտիա, Միտիլի, Գալամաթա, Վօլօ եւ Լարիսա: Նոր եկեղեցիներ կառուցուեցան Աթէնքի, Բիրէի, Բանկրաթի, Սելանիկի, Բերիսթերի, եւ Գոզմիոյ մէջ: Մշակութային եւ մարզական կեանքը ծաղկեցաւ յունահայ կեանքէն ներս՝ հայ երաժիշտներով, մարմնակրթական միութիւններով, թատերական արուեստով եւ բարեսիրական կազմակերպութիւններով: Հայ Կաթողիկէ եւ Բողոքական համայնքները եւս ծաղկեցան իրենց հոգեւոր մշակներով: Կարապետ Եպիսկոպոս իր պաշտօնին վրայ մնաց ցկեանս, եւ վախճանեցաւ 1950 թուականին: Հայրապետական որոշումով Եգիպտահայ Թեմի Առաջնորդ Սամբրէ Արքեպիսկոպոս Սիրունեան յաջորդող հինգ տարիներուն վարեց նաեւ այցելու Առաջնորդի պարտականութիւնները տարեկան այցելութիւններով եւ քահանաներու ձեռնադրութիւններ կատարելով:

**Վերջին Շրջանը**  
**Ներկայ Կացութիւնը**  
Ներքին պայմաններ յետածգեցին յաջորդ առաջնորդին ընտրութիւնը: Կիլիկիոյ 1956 թուի Կաթողիկոսական ընտրութեան հետ կապուած անհիմն պատճառներով մի քանի թեմեր բաժնուեցան Մայր Աթոռէն որոնցմէ մին եղաւ Յունահայ Թեմը, հակառակ անոր որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական Պատուիրակ մը նշանակած էր եւ ուղարկած Աթէնք: Քաղաքական նոյնքան անհիմն պատրուակներով Պատուիրակը չէր կրցած մնալ իր պաշտօնին վրայ, եւ 1958-ին, հակառակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի խնամքին եւ հոգածութեան, Յունահայ Թեմը կիսուեցաւ եւ Կիլիկիոյ Աթոռին ենթարկուեցաւ: Առ այժմ Էջմիածնական եւ Կիլիկեան թեմեր անկախաբար իրենց վարչականներով կը զբաղեցնեն Յունահայ գաղութը:

**Տազնապն ու Բաժանումը**  
Անթիլիասի հոգեւոր իշխանութեան սկզբնական տազնապն անմիջապէս սկսաւ իր անկանոն հետեւանքները դրսեւորել, որուն Յունահայ թեմը եւս զոհ կ'երթար «բաժանեա զի տիրեսցես» քանդիչ քաղաքականութեան: Կանոնազանց քայլ մը առնելով, Անթիլիասի Կաթողիկոսութիւնը եւ Աթոռը հովանաւորող քաղաքական կուսակցութիւնը, իրենց ծրագրին համաձայն 1957 թուին իրենց կենթարկէին Մայր Աթոռի ենթակայ Յունաստանի թեմը, առանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի գիտութեան եւ արտօնութեան:

Նոյն տարուոյ հոկտեմբեր 5-ին Յունաստանի թեմական ժողովը միակողմանի խնդրանք մը ներկայացնելով, ստորագրութեամբ Կիլիկեան միաբան Սահակ Վարդապետ Այվազեանի եւ Սիրիան ներսէսեանի, Կիլիկիոյ Զարեհ Ա. Կաթողիկոսէն հովանաւորութեան գիր մը կը ստանար 1958 հոկտեմբեր 13 թուակիր, որուն կը յաջորդէր Աթոռին ենթարկեալ թեմին Կոնդակը:

**Մայր Աթոռի Դիրքը**  
Յունահայ թեմը նոյն թուականին Կիլիկիոյ ենթարկեալ հինգ թեմերէն մին կ'ըլլար: Կատարուած կանոնազանցութեանց դիմաց Մայր Աթոռ շուտով Հայրապետական 1957 Դեկտեմբեր 20 թուակիր Կոնդակով պիտի դատապարտէր թեմերու ոտնձգութիւնները ու պաշտպանէր Հայ Եկեղեցւոյ նուիրապետա կան կարգն ու կանոնը: Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի սոյն Կոնդակի կեդրոնական մտահոգութիւնը հայ ժողովուրդին բաժանումն էր իր Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն, որուն համար ալ Հայրապետը ծանր պարտաւորութիւն կը ձգէր Անթիլիասի եւ անոնց ղեկավարներուն վրայ որպէս «հերձուած ստեղծողներ»: Կոնդակի կողքին Հայրապետական վճիռով կոչ կ'ուղղուէր Յունաստանի Թեմին հեռու մնալ մնան արարքներէ եւ փարիլ պատմական եւ կանոնական Մայր Աթոռին ի Ս. Էջմիածնին:  
Կանուխէն՝ Մայր Աթոռ 1955 Դեկտեմբերին արդէն առժամեայ առաջ նորդական տեղապահ մը նշանակած էր Յունահայ Թեմին «մտահոգուած լինելով թափուր թեմերի հարցով», եւ ինչ որ կարելի էր Անթիլիասի միջոցաւ, կարելի պիտի ըլլար ընել նաեւ կանոնական սահմաններու մէջ եւ ոչ ոտնձգութեամբ, նաեւ Մայր Աթոռի միջոցաւ՝ արտասահմանի հոգեւորականներու ծառայութեամբ, ինչպէս կը գրէին Մայր Աթոռէն:

### Կը Հրաւիրենք Մասնակցելու Համահայկական Երիտասարդական Հաւաքին



ՀՀ սփիւռքի նախարարութիւնը եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը պետական այլ կառոյցներու հետ համատեղ յուլիս 6-8 կը նախատեսեն իրականացնել Հայաստանի առաջին Հանրապետութեան հռչակման 100 եւ Երեւանի հիմնադրման 2800 ամեակներուն նուիրուած համահայկական երիտասարդական հաւաք:

Համաժողովը կ'ունենայ առաւելապէս գործնական բնոյթ: Կը կազմակերպուին հանդիպումներ եւ քննարկումներ պետական, հասարակական եւ մշակութային յայտնի գործիչներու եւ հոգեւորականներու հետ:

Համաժողովին կրնան մասնակցիլ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի այն երիտասարդները, որոնք ուսանողներ են, երիտասարդական կազմակերպութիւններու ղեկավարներ, ներկայացուցիչներ, գործիչներ:

Հայաստանի մէջ մասնակիցներու կեցութեան, սնունդի եւ տեղափոխման ծախսերը կ'իրականացնեն կազմակերպիչները:

Դարձէ ք համահայկական այս նախաձեռնութեան մասնակիցը, եկէ՛ք Հայրենիք յոբելեանական այս փառահեղ տարուան:

Լրացուցիչ տեղեկութիւններու համար կրնաք զանգահարել 060500830 հեռախօսահամարով կամ ուղարկել Ձեր հարցումը panarmenianyouthparliament@gmail.com հասցէին:

### Հայաստան Առաջին Անգամ Մասնակցած Է Լայպցիկի Գիրքի Տօնավաճառին

Այս տարի առաջին անգամ ըլլալով Հայաստանը մասնակցած է Մարտ 15-18 Գերմանիոյ Լայպցիկ քաղաքին մէջ տեղի ունեցած ամենամեայ Գիրքի միջազգային տօնավաճառին:



Հայաստանի արտաքին գործոց նախարարութենէն կը նշեն, որ հայկական տաղաւարին մէջ ներկայացուած են հայ դասական եւ ժամանակակից գրողներու, նկարիչներու ստեղծագործութիւններ, հայոց պատմութեան վերաբերեալ հայ եւ օտարազգի հեղինակներու աշխատանքներ:

Գերմանիոյ մէջ Հայաստանի դեսպան Աշոտ Մմբատեան հանդիպած է տօնավաճառի գլխաւոր տնօրէն Օլիվըր Տիլլէի, ինչպէս նաեւ տարբեր խոշոր հրատարակչութիւններու ղեկավարներու հետ:

Կողմերը պատրաստակամութիւն յայտնած են ընդլայնելու տօնավաճառին Հայաստանի մասնակցութիւնը եւ այս ուղղութեամբ ձեռք բերել շարք մը պայմանաւորուածութիւններ:

Դեսպանը կարեւոր համարած է նաեւ Երեւանի մէջ Կեոքէի կեդրոնի բացումը՝ Հայաստանի մէջ գերմաներէնի տարածման, գերմաներէն լեզուով հայ գրականութիւնը ընթերցողին հասանելի դարձնելու հարցերով: Լայպցիկի Գիրքի միջազգային տօնավաճառը երկրորդն է Գերմանիոյ՝ Ֆրանքֆուրթի Գիրքի տօնավաճառէն ետք: Անիկա սկիզբ առած է 17-րդ դարուն, կ'ընդունի աւելի քան 200 000 այցելու:

### Հայաստանի Մէջ Մեկնարկած Է Ֆրանսախօս Երկիրներու Խորհրդարանական Վեհաժողովի Քաղաքական Յանձնաժողովին Նիստը



Երեւանի մէջ մեկնարկած է Ֆրանսախօս երկիրներու խորհրդարանական վեհաժողովի քաղաքական հարցերու յանձնաժողովին նիստը:

Ըստ «Armenpress.am»-ի՝ նիստին կը մասնակցին ՀՀ արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալպանտեան, ազգային ժողովի նախագահ Արա Պապոյեան, ֆրանսախօս երկիրներու ԽՎ-ի մէջ հայկական պատուիրակութեան ղեկավար Մարգարիտ Եսայեան, որուն հրաւերով Ֆրանսախօս երկիրներու ԽՎ պատուիրակութիւնը ժամանած է Հայաստան:

ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալպանտեան կարեւոր կը համարէ Ֆրանսախօս երկիրներու խորհրդարանական վեհաժողովի քաղաքական հարցերու յանձնաժողովի պատուիրակութեան այցը Հայաստան: «Ի հարկէ, մենք շատ ուրախ ենք, որ զագաթաժողովին ընդառաջ, որ տեղի պիտի ունենայ այս տարուան Հոկտեմբերին, մենք նաեւ կը կազմակերպենք տարբեր ձեւաչափերով հանդիպումներ: Ասիկա միայն ողջունելի եւ բաւական լուրջ ներկայութիւն է: Շատ երկիրներէ մօտաւորապէս քանի մը տասնեակ պատգամաւոր եկած է այստեղ, եւ ես կը կարծեմ՝ դէպի զագաթաժողովի նախապատրաստական ուղին ասիկա կարեւոր խթան պիտի ըլլայ», - ըսած է ան:

Պատուիրակութեան կազմին մէջ են աշխարհի 27 երկրի խորհրդարաններու ներկայացուցիչներ, ընդհանուր թիւով, 50 պետական-քաղաքական գործիչ:

### Կը Ծրագրուի Բանակին Մէջ Աւելի Մեծ Թիւով Կիներ Ներգրաւել

ԵՐԵՒԱՆ.- Կը ծրագրուի կին զին-ծառայողներու ներգր-րաւումը աստիճանաբար աւելցնել բանակին մէջ նախ արհեստագիտական ապահովման, ապա միւս ոլորտներէն ներս:



Կին զինուորները աւելի մեծ թիւով պիտի ընդգրկուին պահեստագորային ծառայութեան մէջ: Նշուած ծառայութեան ներդրումը հնարաւորութիւն պիտի տայ առաւել արդիւնաւետ կերպով օգտագործելու պահեստագորի մասնագիտական ներուժը՝ պարբերական վարժութիւններու եւ զինուած ուժերու խնդիրներու կատարման նպատակային ներգրաւման միջոցով:

Արդիականացման ծրագիրով նախատեսուած համալիր ջանքերու շնորհիւ՝ պիտի ապահովուի զինուած ուժերու վտահ մուտքը կայացման չորրորդ տասնամեակ՝ իբրեւ Հայաստանի ազգային անվտանգութեան գլխաւոր երաշխիք: Այդ երաշխիքը պիտի ծառայէ իբրեւ հաւանական հակառակորդները զսպող գործօն:

### Պետք Եղած Ատեն Հակառակորդին Կրկին Ցոյց Կու Տանք Ռազմական Ճանապարհով ԼՂ Հիմնախնդիրը Լուծելու Անհեռանկարայնությունը. ՀՀ Նախագահ

Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգաւորումը Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության անվտանգության առաջնահերթ խնդիրն է:



Ինչպէս կը տեղեկացնէ «Արմէնփրես»-ը, այս մասին ըսած է ՀՀ նախագահ, Ձինուած ուժերու գերագոյն գլխաւոր հրամանատար Սերժ Սարգսեան Մարտ 19-ին Պաշտպանութեան նախարարութեան վարչական համալիրին մէջ ՁՈՒ ղեկավար կազմի գործնական հաւաքի մասնակիցներուն հետ հանդիպման ժամանակ՝ աւելցնելով, որ Հայաստանի դիրքորոշումը անփոփոխ է:

«Ատոր մասին վերջերս բազմաթիւ առիթներ ունեցած եմ խօսելու տարբեր, նաեւ ամենաբարձր միջազգային ամպլոններէ: Ըսածներս կրկնելու իմաստը չեմ տեսներ: Միեւնոյն ժամանակ բանակցութիւններու յառաջընթացի մասին դրական լուրով ձեզի հետ կիսուի, ցաւօք, չեմ կրնար: Մէկ բան ակնյայտ է՝ մենք պիտի շարունակենք բանակցութիւնները եւ մեր գործընկերային շփումները ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներու հետ, քանի որ անոնք լիազօրուած են միջազգային հանրութեան կողմէ միջնորդ ըլլալու հակամարտող կողմերու միջեւ եւ օժանդակելու հարցի խաղաղ հանգուցալուծման մշակման:

Բայց եւ այնպէս, հիմնական պատասխանատուութիւնը հակամարտող կողմերու վրայ է, եւ մենք մեր բաժինը միշտ լաւ գիտակցած ենք»,- ըսած է Սերժ Սարգսեան՝ նշելով, որ նոյն այդ պատճառով ալ հայկական բանակը եղած է, կայ եւ պիտի ըլլայ Լեռնային Ղարաբաղի խնդիրի կարգաւորման հիմնական գործօնը:

Ան նշած է, որ Պաքուէն անընդհատ հեղեղուող սպառնալիքներու պարագային զինուած ուժերը մեր յենարանն ու կռուանն են: «2016 թուականի ապրիլեան գործողութիւնները հակառակորդին կողմէ ուժերու յարաբերակցութիւնը ստուգելու խոշոր փորձ էր: Անոնք, ի հարկէ, այդ փորձը տանուլ տուին: Առկայ պայմաններու մէջ մեր խնդիրն է պահպանել դիրքաւորման շրջագիծը: Աւելին, մենք պէտք է հետեւողական աշխատինք եւ միշտ պատրաստ ըլլանք հակադարձելու՝ ուժերու հաւասարակշռութիւնը խախտելու հակառակորդին բոլոր խոշոր եւ մանր փորձերուն: Մենք բազմիցս ցոյց տուած ենք հակառակորդին եւ պէտք եղած պարագային կրկին ցոյց կու տանք ռազմական ճանապարհով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը լուծելու անհեռանկարայնութիւնը: Եւ ամէն անգամ որքան գրագէտ, որքան ցաւալի պատասխան կարենանք անոնց տալ, այնքանով մենք այդ մտայնութիւնը անոնց գիտակցութեան մէջ կ'ամրապնդենք: Մեր հետեւողական աշխատանքի հիմնական նպատակը պիտի ըլլայ հակառակորդին մէջ այդ գիտակցութեան ամրապնդումը»,- աւելցուցած է ան:



### ԵԱՀԿ-ի նախագահութիւնը կ'ուզէ հասնիլ Արցախի տագնապին քաղաքական լուծման

2018-ին ԵԱՀԿ-ը նախագահող Իտալիան ջանք պիտի չինայէ աջակցելու Արցախի հակամարտութեան կողմերուն՝ հասնելու տագնապին քաղաքական լուծման, Armenpress.am-ի հետ բացառիկ հարցազրոյցի մը ընթացքին ըսաւ ԵԱՀԿ-ի մօտ Իտալիոյ ներկայացուցչութեան մամլոյ պատասխանատու Ճիովաննի Տաւոլի:



Խօսելով Արցախի տագնապի լուծման հեռանկարներուն մասին ան յայտնեց. «Ճգնաժամի լուծման տարրերը արդէն դրուած են բանակցութեանց սեղանին՝ շնորհիւ Մինսկի խմբակի համանախագահներուն: Հետեւաբար, լիակատար աջակցութիւն կը ցուցաբերենք մինչեւ հիմա որդեգրուած մօտեցումին: Երբ կողմերը ներգրաւուած էին բարձրագոյն քաղաքական մակարդակի վրայ՝ երկու նախագահներու միջեւ, ուղղակի հաղորդակցութեան ձեւով, մենք ականատեսը եղանք դրական զարգացումներու: Այս առումով մենք կ'աջակցինք եւ կը սատարենք բարձրագոյն մակարդակով կայանալիք ապագայ շփումներուն գիտակցելով, որ կողմերուն մօտ քաղաքական կամքի գոյութիւնը Լեռնային Ղարաբաղի խաղաղութեան հոլովոյթին առանցքային գործօնն է»:

Խօսելով յատուկ նախաձեռնութիւններու մասին, որոնք կրնան յառաջ մղել Արցախի տագնապի լուծման բանակցային հոլովոյթը ան ըսաւ. «ԵԱՀԿ-ի Իտալիոյ նախագահութիւնը նպատակ կը հետապնդէ հասնիլ Լեռնային Ղարաբաղի տագնապի քաղաքական, բանակցային եւ կայուն լուծման:

Մենք պիտի գործենք ԵԱՀԿ-ի նախկին համանախագահողներու օրինակով հետեւողականօրէն աջակցելով Մինսկի խմբակի համանախագահներուն: Մենք ջանք պիտի չինայենք օգնելու եւ աջակցելու կողմերուն՝ համաձայն Մատրիտեան սկզբունքներուն եւ Հելսինքիի եզրափակիչ հռչակագիրին»:

### Միջազգային Հանրութիւնը Պետք է Արցախը Ընդունի Ազգերու Ընտանիքէն Ներս.

Ճոն Էվանսի Յօդուածը The National Interest-ի Մէջ

Միջազգային հանրութիւնը արդէն ժամանակն է, որ ողջունէ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը/Արցախը ազգերու ընտանիքին մէջ:



Այս մասին, ըստ artsakhpress.am-ի, The National Interest ամսագիրին մէջ հրատարակուած յօդուածին մէջ գրած է Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու նախկին դեսպան Ճոն Էվանս, որ անդրադարձած է Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանի յառաջիկայ այցին ԱՄՆ:

«Այս շաբաթ Արցախի՝ ժողովրդավարական ճանապարհով ընտրուած նախագահ Բակո Սահակեանը պիտի այցելէ Ուաշինկթըն: Ան պիտի չընդունուի ԱՄՆ վարչակազմին կողմէ՝ մասամբ նաեւ այն պատճառով, որ ԱՄՆ-ն լուր կը մնայ այն հարցին շուրջ, թէ արդեօք Արցախը պէ՞տք է ի վերջոյ անկախ ըլլայ Ատրպէճանէն, որուն կցուած էր 1921-ին Իոսիֆ Ստալինի կողմէ»,- գրած է ԱՄՆ նախկին դեսպանը: Ան ընդգծած է, որ Ուաշինկթընը, ինչպէս որեւէ այլ երկիր, չի ճանչնար Արցախը, սակայն Բակո Սահակեանին նախորդած նախագահը (Արկաղի Ղուկասեանը), որ 1999 եւ 2002 թուականներուն այցելած էր ԱՄՆ, աշխատանքային մակարդակով հանդիպած էր պետական բաժանմունքի պաշտօնեաներու հետ: Բացի այդ, Ուաշինկթընի մէջ կայ Արցախի ոչ պաշտօնական ներկայացուցիչ:

### Երուսաղեմի Պատրիարքը Դիմած է Թուրքիոյ Սահմանադրական Ատեան

ՈՒՅԿԱՐ ԿԻԻԼԹԵՔԻՆ

Երուսաղեմի հայոց պատրիարքարանը նախապես իրեն պատկանող կալուածներու վերատիրանալու համար դիմած է Սահմանադրական ատեան: Պատրիարքարանը Պոլսոյ մէջ ունէր բազմաթիւ կալուածներ, որոնք 1973 թուականէն ետք գրաւուած էին պետութեան կողմէ: Երուսաղեմի պատրիարքարանը այդ գրաւումներու դէմ իրաւական պայքար տարած էր Թուրքիոյ գանազան դատարաններէն ներս: Սակայն իր բոլոր դիմումները ապարդիւն մնացած էին, որուն



հետեւանքով Երուսաղեմի պատրիարք Նուրհան Արք. Մանուկեան, իբրեւ վերջին օրինական մարմին դիմած է Սահմանադրական ատեանի, կը հաղորդէ «Ակօս»-ը:

Թուրքիոյ իշխանութիւնները անցեալին վերջ տուած էին պատրիարքարանը ներկայացնող Սուրբ Յակոբի անուան հիմնարկի օրինական գոյութեան: Նշենք որ Երուսաղեմի պատրիարքարանը եւ Սուրբ Յակոբ հիմնարկը իրականութեան մէջ նոյն մարմինն են, քանի որ պատրիարքարանի պաշտօնական անուանումին մէջ անգլերէնով պիտի յիշուի Saint James եւ արաբերէն Սար Յակոբ անուններով:

Բացի այս օրուայ պատրիարքը կը նշուի որպէս հիմնադրամի նախագահ: Երեւոյթ մը, որ այնքան ալ հասկնալի չի թուիր Թուրքիոյ իշխանութիւններուն, որոնք պաշտօնապէս լուծարքուած կը համարեն սոյն հիմնադրամը:

Այս մասին պատրիարքարանի իրաւապաշտպան Ալի Էլպէտյոլլու դիտել կու տայ, թէ կարելի չէ Սուրբ Յակոբի հիմնարկը լուծուած համարել, մանաւանդ երբ ան կը պահէ իր գոյութիւնը այս անուանումով միջազգային իրաւական գետնի վրայ: Մնաց որ Երուսաղեմի պատրիարքարանը արտերկրեան հաստատութիւն մը ըլլալով Թուրքիոյ իշխանութիւնները չեն կրնար անոր գոյութեան մասին վճիռ արձակել: Փաստաբանի փոխանցած տեղեկութիւններով յայտնի կը դառնայ թէ Նուրհան պատրիարք սեփականութեան իրաւունք կը պահանջէ աւելի քան 100 միաւոր կալուածներու վրայ եւ այդ պահանջատիրութիւնը յետայսու կակնկալուի Սահմանադրական ատեանէն:

Վերջերս այս դատերու վերաբերեալ թղթածրարներու քննարկման նպատակով Նուրհան պատրիարք այցելած էր քաղաքս եւ հանդիպումներ ունեցած փաստաբան Էլպէտյոլլուի հետ: Պատրիարքի այս այցելութիւնը կասկածեալ եւ առեղծուածային մեկնաբանուած էր «Ժամանակ» օրաթերթի կողմէ, որուն լրատուութեան դէմ պատրիարքարանը փաստաբանի միջոցաւ հրատարակեց հերքում մը, փոխանցելով զանազան մանրամասնութիւններ թէ Նուրհան պատրիարքի այցելութեան եւ թէ շարունակուող գործընթացի մանրամասնութիւններու շուրջ:

Շարունակուած էջ 1-էն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ

Կարեն Կարապետեան իր հանդիպումներուն ընթացքին անդրադարձաւ լիբանանահայութեան դերակատարութեան, իւրաքանչիւր լիբանանահայ նկատելով Հայաստանի դեսպանը Լիբանանի մէջ, հաստատելով, որ լիբանանահայերը միշտ ալ Լիբանանը եւ Հայաստանը հաւատարիմ քաղաքացիներ են:

Հարիրի շեշտեց, որ Լիբանանի եւ Հայաստանի, ինչպէս նաեւ լիբանանցի եւ հայ ժողովուրդներուն միջեւ պատմական եւ ամուր յարաբերութիւններ գոյութիւն ունին՝ շնորհիւ լիբանանահայութեան, որ Լիբանանը բաղկացնող հան գոյցին անբաժանելի մէկ մասնիկն է: «Ես հպարտ կը զգամ, որ հայրս՝ նահատակ վարչապետ Ռաֆիք Հարիրին, առաջինն էր, որ Հայաստանի պետութեան հետ եղբայրական յարաբերութիւններու սկսաւ՝ 1991-ի ամոր անկախութենէն ետք, եւ մենք այդ ուղեգիծով պիտի շարունակենք աշխատիլ՝ իրականացնելով երկու երկիրներուն միացեալ շահերը», ըսաւ ան: Հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աուն իր կարգին ընդունեց վարչապետ Կարապետեանը, որուն ներկայութեան ան ողջունեց Լիբանանի եւ Հայաստանի միջեւ ներդրումներուն զօրակցող Լիբանանեան-հայկական միացեալ ֆոնտ մը հիմնելու ծրագիրը: Նախագահ Աուն հաստատեց, որ ինք շատ ուրախ է երկկողմանի յարաբերութիւններ աշխուժացման եւ գործնականացման համար, ինչպէս անցեալ ամիս Հայաստան կատարած իր այցելութեան ընթացքին կնքուած համաձայնութեամբ:

Վարչապետ Կարապետեան այցելեց նաեւ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի, որուն հետ քննարկեց Հայաստանի եւ Լիբանանի խորհրդարաններուն միջեւ գործակցութիւնը աշխուժացնելու հեռանկարները, ինչպէս նաեւ շրջանային իրադարձութիւնները:

Եզրակացնելով իր հանդիպումներու շրջագիծը, Կարեն Կարապետեան հաստատեց, որ Հայաստան պատրաստ է զօրակցելու բարեկամ Լիբանանին՝ մտադրելով, որ լիբանանցին գիտակցութեամբ, իմաստութեամբ եւ ազգային արժեքներով զինուած կարենայ յաղթահարել իր դէմ ցցուած մարտահրաւերները, պահպանելով երկրին ապահովական կայունութիւնն ու բարգաւաճման ընթացքը:

Շարունակուած էջ 1-էն

### Դեսպան Չարչոլլեանը...

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին՝ Կիպրոսի նախագահը նշեց, որ իրենք ուշադրութեամբ կը հետեւին զարգացումներուն եւ կը գնահատեն հայկական կողմի ջանքերը տարածաշրջանի մէջ խաղաղութիւն եւ կայունութիւն հաստատելու ուղղութեամբ՝ աւելցնելով, որ հիմնախնդրի խաղաղ կարգաւորումը այլ ընտրանք չունի:

Նախագահ Անասթասիատիսը յայտնեց նաեւ, որ իրենք լիովին կ'աջակցին ուժի չկիրառմամբ եւ երկխօսութեան միջոցով հիմնախնդրի բացառապէս խաղաղ կարգաւորման ուղղութեամբ ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներու ջանքերուն:

Ամփոփելով խօսքը՝ Կիպրոսի նախագահը իր ջերմ ողջոյնները ու բարեմաղթանքները յղեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանին եւ բարեկամ հայ ժողովուրդին:

Շնորհակալութիւն յայտնելով ջերմ ընդունելութեան եւ բարեմաղթանքներու համար՝ դեսպան Չարչոլլեանը ընդգծեց, որ իր առաքելութեան ընթացքին առաւելագոյն ջանքեր կ'ներդնէ երկու բարեկամ երկիրներու յարաբերութիւններու նոր լիցք հաղորդելու եւ երկու եղբայրական ժողովուրդներու համագործակցութիւնը ալ աւելի

ամրապնդելու համար:

Դեսպան Չարչոլլեանը նախագահ Անասթասիատիսին փոխանցեց նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի շնորհատրանսքները ու ջերմ բարեմաղթանքները Կիպրոսի նախագահի բարձր եւ պատասխանատու պաշտօնին վերընտրուելու կապակցութեամբ:

Զրուցակիցները համակարծիք էին, որ հայ-կիպրական բարեկամական յարաբերութիւններու ամրապնդման գործին մեծ է հայ համայնքի առկայութիւնը Կիպրոսի մէջ, ուր ամբողջութեամբ եւ ներդաշնակօրէն ինտեգրուած է երկրի քաղաքական, տնտեսական եւ մշակութային կեանքին:

Տեղի ունեցաւ միտքերու փոխանակում տարածաշրջանային եւ միջազգային օրակարգի հարցերու շուրջ:

Նախագահ Անասթասիատիսը անդրադարձաւ կիպրական հիմնախնդրին՝ ներկայացնելով Կիպրոսի եւ միջազգային հանրութեան ջանքերը խնդիրը միջազգային եւ ԵՄ իրաւունքի շրջանակներուն մէջ համապարփակ կարգաւորելու եւ հիւսիսային Կիպրոսի գրաւումը վերացնելու ուղղութեամբ:

Իր հերթին, դեսպան Չարչոլլեանը նախագահ Անասթասիատիսին մանրամասն ներկայացուց Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ վերջին զարգացումները, Հայաստանի եւ ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահ երկիրներու համատեղ ջանքերը՝ հիմնախնդրի խաղաղ կարգաւորման գործընթացի առաջնորդման ուղղութեամբ:

**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ 2018-Ի ԶԱՏԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ**

Ի գիտութիւն հաւատացեալ մեր ժողովուրդին կը տեղեկացնենք Փերիսթերիի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ Զատկական եկեղեցական արարողութիւններու ժամանակացուցակը.

**ԾԱՂԿԱԶԱՐԴ, ԿԻՐԱԿԻ 1 ԱՊՐԻԼ 2018**

Ս. Պատարագ ժամը 10.00-ին  
Դռնբացէք՝ երեկոյեան ժամը 6.00-ին

**ԱԲԱԳ ԴԻՆԳՇԱԲԹԻ, 5 ԱՊՐԻԼ 2018**

Հաղորդութեան Պատարագ ժամը 10.00-ին  
Ոտնլուայ՝ երեկոյեան ժամը 6.00-ին  
Խաւարում՝ երեկոյեան ժամը 8.00-ին

**ԱԲԱԳ ՈՒՐԲԱԹ, 6 ԱՊՐԻԼ 2018**

Կարգ Խաչելութեան ժամը 12.00-ին  
Կարգ Թաղման՝ երեկոյեան ժամը 8.30-ին

**ԱԲԱԳ ՇԱԲԱԹ, 7 ԱՊՐԻԼ 2018**

Երեկոյեան ժամերգութիւն ժամը 7.00-ին  
ճրագալոյցի Պատարագ ժամը 8.00-ին

**Ս. ԶԱՏԻԿ, ԿԻՐԱԿԻ 8 ԱՊՐԻԼ 2018**

Պատարագ ժամը 10.00-ին

**ՄԵՌԵԼՈՑ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 9 ԱՊՐԻԼ 2018**

Հոգեհանգստեան կարգ ժամը 11.00-ին

Շարունակուած էջ 3-էն

**ՅՈՒՆԱՅԱՅ ԳԱՂՈՒԹԸ ՕՐՅՆԵԱԼ...**

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը իր կարգին, յունիս 12 թուակիր հաղորդագրութեամբ, «անհուն վշտով» կը տեղեկանար Կիլիկիոյ Զարեհ Կաթողիկոսի առած որոշումի մասին՝ «դաւադիր ուժերի անխիղճ թելադրութեանց ներքեւ յափշտակիչ ոտնձգութիւններ» որակելով զայն: Յունահայ Թեմի մէկ մասը 1958 յուլիս 10 թուակիր Կոնդակով կ'անցնէր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ուր առաջնորդ մըն ալ կը նշանակուէր: Թեմին միւս հատուածը կը մնար հաւատարիմ Մայր Աթոռոյ որպէս հարազատ Թեմը Յունաստանի հայոց՝ իր Առաջնորդով:

**Յաւելեալ Բարդութիւններ**

Շշմարտութիւնն այն է որ միայն Հայ եկեղեցին պիտի շահէր եթէ կարգադրութիւնները կատարուէին Մայր Աթոռի գիտութեամբ եւ առանց կանոնական անջատումի, եւ սակայն այդ կը պահանջէր պատուաբեր կամք եւ արի կեցուածք: Հոս սակայն կանգ չէր առներ ծրագրուած կանոնազանց յառաջխաղացքը: 1965-ին Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վերախմբագրեալ 1941 թուականի ներքին Կանոնագրութեան մէջ պիտի ներմուծուէին երկու նոր վմասաբեր յօդուածներ՝ թիւ 32 եւ 33: Առաջինին համաձայն Աթոռին թեմերութիւնը կ'աւելնար իրաւական չորս թեմերէն անդին, արձանագրելով հինգ զրաւեալ թեմեր եւս, ներառեալ Յունահայ թեմը, եւ երկրորդ յօդուածով ալ «այլ թեմեր եւս կրնան կազմուիլ կամ միանալ Կիլիկիոյ Աթոռին», համաճարակի ենթարկելով Հայ եկեղեցւոյ տագնապը եւ փակելով ամէն դուռ բանակցութեանց առջեւ: Վերջին թեմը որ անջատուեցաւ եւ միացաւ Կիլիկիոյ Աթոռին, ներկայ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրով, Գանատայի հայոց թեմն էր, ուր կանուխէն, 1984-էն ի վեր, Մայր Աթոռ հաստատած է օրինական Թեմը:

Այսօր Գանատահայութիւնը կը ներկայանայ երկու անջատ թեմերով, առաջինը հարազատ եւ հաստատուած Մայր Աթոռէն, եւ միւսը՝ անջատեալ:

Կլէմտէյլ



**Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն**

Կիրակի 11 Մարտ 2018-ին, տեղի ունեցաւ Միութեանս Ընդհանուր Անդամական Ժողովը համաձայն Կանոնագրի յօդուածներուն, ուր ընտրուեցաւ Միութեանս Նոր Վարչութիւնը:

Նորընտիր Վարչութիւնը իր անդրանիկ նիստը գումարեց Երկուշաբթի 19 Մարտ 2018-ին եւ կազմեց ղիւանը հետեւեալ ձևով:

Օվսաննա Գարայեան	Ատենապետուհի
Արիս Խաչատուրեան	Փոխ-Ատենապետ
Լուսի Յակոբեան	Ատենադպրուհի
Սերգօ Բաչանեան	Գանձապահ
Յովհաննէս Առաքելեան	Խորհրդական Անդամ
Արման Մէնէնտեան	Խորհրդական Անդամ
Յովհաննէս Զուլուքեան	Խորհրդական Անդամ

Հ. Բ. Ը. Միութեան Յունաստանի Կեդր. Յանձնաժողով  
Փ. Ճալիբո, 21 Մարտ 2018

**Նուիրատուութիւն**

Տէր եւ Տիկ. Ճոն եւ Միլվա Ներսէսեան 300 եւրօ կը նուիրեն Հ.Բ.Ը.Միութեան «Արթաքի Գալփաքեան» վարժարանին:

**ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ**

**ՄԻՕՐԵԱՅ ՊՏՈՅՑ  
13/5/2018**

Արարատ Մ.Մ.Միութեան  
Տիկնանց Յանձնախումբ

**Շնորհաւորանք**

Սերգօ Քաջիկեան եւ Իրինիկ Արեանասօբուլու (Սքովտիա) բախտաւորուած են երկրորդ աղջիկ զաւակով մը:



Մեր լաւագոյն բարեմաղթութիւնները ծնողաց եւ մեծ ծնողաց:



**Քաջալերեցէք  
հայ  
մամուլը**

**ՆՈՐ ԱՇԽԱՐՀ  
ԱԶԳԱՅԻՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

Մեփականութիւն  
ԱՐԱՐԱՏ Մ Մ ՄԻՈՒԹԻԻՆ  
Միսթու 33, Նիքեա, Յունաստան  
Համակարգչային  
շարուածքը եւ էջադրումը՝  
ՆՈՐ ԱՇԽԱՐՀ շաբաթաթերթի  
Տնօրէն՝  
Ընկ. Սարգիս Խաչատուրեան  
Արտօնատէր -  
Փաստաբան՝  
ընկ. Յակոբ Տէսձեան

“NOR ASXAP”  
Αρμένικη Εβδομαδιαία  
Εφημερίδα  
Ιδιοκτησία “ΑΡΑΡΑΤ”  
Φιλολογικό Αθλητικό Σωματείο

Διευθυντής  
Σαρκίς Χατσατουριάν  
Εκδότης -  
Ιάκωβος Φετζιάν Δικηγόρος

Σηστού 33 - TK 18450 - Νίκαια  
Τηλ: 210-4926085  
“NOR ASHKHAR”  
Armenian Cultural Social Weekly

33 Sistou Str.  
GR 18450 NIKEA GREECE  
Tel-Fax: 00+30+210-4926085

Բացի իմբազրականներէն, յօդուածագիրներու տեսակէտներն ու գաղափարները անպայմանօրէն չեն արտայայտեր թերթին ուղեգիրը:



Το Κέντρο Ελληνο-Αρμενικών Μελετών και το Σπίτι της Κύπρου σας προσκαλούν τη Δευτέρα 26 Μαρτίου 2018 ώρα 19:00 σε επιστημονική εσπερίδα με θέμα

**140 χρόνια από το Συνέδριο του Βερολίνου: Στις ρίζες του Μακεδονικού, του Κυπριακού και του Αρμενικού Ζητήματος**



Επιμέλεια εκδόσεως: Σοφία Βλάχου-Γαρπόζι

Ομιλητές:  
**Σπυρίδων Πλουμίδης**  
Επίκουρος Καθηγητής Πανεπιστημίου Αθηνών  
*Το Συνέδριο του Βερολίνου, τομή στην ευρωπαϊκή πολιτική, τροπή του Μακεδονικού Ζητήματος*

**Ανδρέας Αντωνόπουλος**  
ΕΔΙΠ Πανεπιστημίου Αθηνών  
*Το Συνέδριο του Βερολίνου με το βλέμμα του Ελληνισμού της Κωνσταντινούπολης*

**Ιωσήφ Κασσεσιάν**  
Συγγραφέας, Γραμματέας ΚΕΑΜ  
*Η γέννηση ενός έθνους, οι Αρμένιοι στο Συνέδριο του Βερολίνου*

**Άννα Γκιβαργκιζιάν**  
Εκδότρια της επιθεώρησης ΖΑΜ (Μόσχα),  
Επίκουρος Καθηγήτρια στο Παιδαγωγικό Πανεπιστήμιο της Μόσχας  
*Ένα κάλεσμα στα όπλα, η προοπτική της ένοπλης προβολής των αρμενικών εθνικών αιτημάτων μετά το Συνέδριο του Βερολίνου*

**Αθανασία Φωτιάδη**  
Νομικός, μέλος της Σ.Ε. της Σ.Ε.Υ.Α.Ε.Κ. και του Δ.Σ. του Σ.Σ. Δικηγόρων Ελλάδος  
*Ηθικός, νομικός και πολιτικός παράμετροι της Σύμβασης της Κύπρου (1878)*

Συντονίζει ο Δρ Ιστορίας, συγγραφέας Λουκάς Αξελός

ΣΠΙΤΙ ΤΗΣ ΚΥΠΡΟΥ, Ξενοφώντος 2<sup>ο</sup>, 105 57 Αθήνα, Τηλ.: 210 3734 934, Fax: 210 3734 904, email: spificy@otenet.gr, www.spifitskyrou.gr

**Արցախցի փոքրիկին պատրաստած դիմանկարը արժանացած էր աշխարհահռչակ Հոբինկի հաւանութեան**

Կը պարգուի՝ 14-ամեայ ստեղծագործող Անի Գեորգեան, որ կը յաճախէ Ստեփանակերտի Խաչատուր Աբովեանի անուան թիւ 1 հիմնական դպրոցի 9-րդ դասարանը, 2015 թուականի ամրան աշխարհահռչակ անգլիացի բնագէտ-տեսաբան Մթիւրն Հոբինկին նուիրած է Ասկերանի շրջանի Աստղաշէն համայնքի ծովաշուշաններով պատրաստուած անոր դիմանկարը:

Ըստ «Արցախփրես»-ի՝ Անի Գեորգեան պատմած է, որ Հոբինկի հանդէպ իր հետաքրքրութիւնը յառաջացած է այն ժամանակ, երբ իմացած է, որ սահմանափակ ֆիզիկական կարողութիւններով մարդը դարձած է աշխարհահռչակ գիտնական:

«Ատիկա զիս շատ ոգեւորած է եւ երբ 2015-ին տեղեկացայ, որ Արցախ կը գտնուի յայտնի աստղաֆիզիկոս Գարիկ Բարայլեանը, որ անձամբ կապ ունէր Հոբինկի հետ, խնդրեցի անորմէ, որ իմ պատրաստած դիմանկարը, իր ձեռքով փոխանցել մեծ գիտնականին: Յետոյ տեղեկացայ, որ քանի մը ամիս անց դիմանկարը հասած է հասցէատիրոջը, որ շատ հաւնած է իմ աշխատանքը»,- նշած է Ա. Գեորգեան:

Յիշեցնենք, որ աշխարհահռչակ անգլիացի բնագէտ-տեսաբան Մթիւրն Հոբինկ մահացաւ 2018-ի Մարտ 14-ին, 77 տարեկանին:

Հոբինկ տեսաբան բնագէտ էր, գիտութեան յայտնի տարածող: Ան կը զբաղէր տիեզերաբանական բնոյթները միակ սկզբունքի վերագրելու տեսութեամբ՝ Տիեզերքի նախնական վիճակի խնդրի հետազոտմամբ:

Հաշմուած գիտնականը աշխոյժ կեանք վարած է՝ զբաղած է գիտութեամբ, դասաւանդած, զեկոյցներով հանդէս եկած՝ աշխարհի հետ շփուելով խօսքի համակարգչայային համադրումով:



**ՄԱԿ-ի Կազմած Աշխարհի Ամենաերջանիկ Երկիրներու Ցանկին Մէջ Հայաստանը կը զբաղեցնէ 129-րդ տեղը**



Հայաստանը Կը Ջբաղեցնէ 129-րդ Տեղը ՄԱԿ-ի կազմած աշխարհի ամենաերջանիկ երկիրներու ցանկին մէջ Հայաստան կը զբաղէ 129-րդ տեղը: The World Happiness Report-ի մէջ ընդամենը 156 երկիր ընդգրկուած է: Վրաստանը 128-րդն է, Ատրպէյճանը՝ 87-րդ:

Երկրի գնահատման ժամանակ հաշուի առնուած են կեանքի տևողութիւնը, ընկերային աջակցութիւնը, փտածութիւնը եւ այլ ցուցանիշներ:

Ճինլանտիան դարձած է ամենաերջանիկ երկիրը: Երկրորդ տեղը Նորվեգիան է: Բացի այդ, Դանիան, Բուլանտիան, Ջուիցերիան, Հոլանտան, Գանատան, Նոր Զելանտան, Շուէտը եւ Աւստրալիան յայտնուած են առաջին տասնեակին մէջ: